ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ապրիլի 2019 թվականի N 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի՝ 2006 թվականի օգոստոսի 29-ի՝ «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» 13-րդ հրամանի 11-րդ կետի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր՝ 1.2-1/ և երկրորդ կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.3-1/ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ:
2. Մրցույթի անցկացման օր նշանակել 2019 թվականի մայիսի 10-ը, ժամը համապատասխանաբար 12:00-ին և 14:00-ին:
3. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել նշված մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

«05» ապրիլի 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ապրիլի 2019 թվականի N 18

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքապետարանում 2019 թվականի մայիսի 10-ին անցկացվող Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր՝ 1.2-1/ և երկրորդ կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.3-1/ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ջավահիր Ամիրխանյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

«05» ապրիլի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ապրիլի 2019 թվականի N 19

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2005 թվականի հուլիսի 14-ի N 1231-Ն որոշումով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու՝ 2006 թվականի օգոստոսի 10-ի N 9 նիստի որոշումը և անշարժ գույքի սեփականատեր Վարդիթեր Վոլոդյայի Պետրոսյանի՝ 2019 թվականի ապրիլի 5-ի դիմումը՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի բնակիչ Վարդիթեր Վոլոդյայի Պետրոսյանին պատկանող բնակարանին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Շահումյանի թ/ֆ համայնք, 1-ին փողոց, 32 շենք, 15 բնակարան:
2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

«05» ապրիլի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ապրիլի 2019 թվականի N 20

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 32/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշումով, 2003 թվականի ապրիլի 17-ի <<Բազմաբնակարան բնակելի շենքերի, բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների /ամառանոցների/ և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների տեղադրության /տարածագնահատման գոտիականության/ գործակիցները հաստատելու մասին>> N 470-Ն որոշումով, քննության առնելով Վարդիթեր Վոլոդյայի Պետրոսյանի՝ 2019 թվականի ապրիլի 5-ի դիմումը՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի 1-ին փողոց, 32/15 հասցեում Վարդիթեր Պետրոսյանի կողմից ինքնակամ կառուցված 3,68 քմ շինությունը ճանաչել օրինական՝ որպես ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար համայնքային բյուջե վճարելով 3,68 քմ x 860 դրամ = 3164,8 ՀՀ դրամ :
2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

«05» ապրիլի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2019 թվականի N 21

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2005 թվականի հուլիսի 14-ի N 1231-Ն որոշումով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու՝ 2006 թվականի օգոստոսի 10-ի N 9 նիստի որոշումը և անշարժ գույքի սեփականատեր Գրավիկ Գրիգորի Հակոբյանի՝ 2019 թվականի ապրիլի 19-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքում գտնվող Գրավիկ Գրիգորի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր՝ 004-078-104-021/ տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Շահումյանի թ/ֆ համայնք, 7-րդ փողոց, 37 հող:
2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

«19» ապրիլի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝044 84 08 08, Էլ. փոստ՝shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2019 թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու՝ 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 06 նիստի N 33-Ն որոշման 7-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ <<04-3-2>> նախահաշվի <<5112>> հոդվածից պակասեցնել 700.0 հազ. դրամ, նույն նախահաշվի <<5134>> հոդվածին ավելացնել 700.0 հազ. դրամ, <<08-2-4>> նախահաշվի <<4237>> հոդվածից պակասեցնել 800.0 հազ. դրամ, նույն նախահաշվի <<4239>> հոդվածին ավելացնել 800.0 հազ. դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՅԱՅԼՈՅԱՆ

«23» ապրիլի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝ 044 84 08 08, էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2019 թվականի N 23

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու՝ 2019 թվականի փետրվարի 28-ի N 02 նիստի N 15 որոշումը՝

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի բնակիչ Սիլվարդ Ռոմիկի Թադևոսյանին համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի բյուջեի 10-7-1 նախահաշվի <<4729>> հոդվածից հատկացնել 50,0 / հիսուն հազար/ ՀՀ դրամ միանվագ դրամական օգնություն՝ երեխա ունենալու կապակցությամբ:
2. Սույն որոշման վերաբերյալ հաղորդում ներկայացնել համայնքի ավագանու առաջիկա նիստում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

«29» ապրիլի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Շահումյանի թ/ֆ համայնք
Հեռ.՝095 84 00 08
փոստ՝shahumyantf.armavir@mta.gov.am
Համայնքային կայք՝ shahumyanitf.am

N 79

<<30 >> ապրիլի 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի՝ 2019 թվականի ապրիլ ամսին ընդունած որոշումները :

Առդիր՝ 7 թերթ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

<<30>> ապրիլի 2019թ.
Շահումյանի թ/ֆ համայնք

Կատ.՝ Հ. Մանուկյան
Հեռ.՝ 093 53 84 56